

172. Յեօվան էլ գնացեր ի, ձիու զին կը բերի, էնու լա-  
ղաւ<sup>1</sup> կը բերի, Դաւթը խաց, պտնիր կը բերի:

Դաւիթն էլ կը ծալը խաց, կը գնի խորճիկ, լաղաւ կտայ  
ձիու բերան. զին կը գնի վար ձիու քեամիլըն, ղօլաննեը<sup>2</sup>  
կը կքի<sup>3</sup>:

173. Յեօվան կերչկի. էնու խէր վուր ղօլան կը կքէր,  
ձին մէկ վուա կը վերուցէր գետնէն. Դաւիթ վուր կքեց, չուրս  
վուան էլ գիանուց կառւեց, սա որ զրեց ըռըկէպ<sup>4</sup> ձին խի-  
ճաւ, խորճիկ զրեց վար թարկ<sup>5</sup>:

174. Խրեօխպէր վուր տիտաւ, էնտեղ լացեց, առաւ խաղ  
ասիլ:

— Խաղար տիտոս, գնաց Սասնայ անէն թուր կէժակին.

- » » » » » կիւտիկ գլխին.
- » » » » » գեօրտիկ Աթմանին.
- » » » » » քեամարն մէջքին
- » » » » » շլվարն վուտին.
- » » » » » ճգմէն »
- » » » » » խաչ պատ. վար աջ թիւին
- » » » » » Գիւռկիկ ճալալին,
- » » » » » Թառլան Դաւիթ:

175. Դաւիթ էսաց. — Խրեօխպէր, էգա մէկ խապարն էլ  
չտուիր, իս թուր յառէջ քիւ վզին աը զարնէր, որ դիւ իմ  
անունն էլ տուիր, առւրմ քի խաթր:

էսաց. — Դաւիթ, քիւ գըլիւն կորպան<sup>6</sup>, տխր քի յա-  
պեռով կըլամ: Դաւիթ, դիւ կերթաս, ճամբախ կաթնով յաղ-  
քիւր կայ, կաթը պէս քաղցր ի, կաթնով աղբուր կըսըն. քեօ  
ձըն էն տե կը կանգնը. էն տե ձիու չը ղօռես, էն տե իջի  
տակ, քիւ ձեռ էրէսը լուայ, քի խաց կի, ձիու կեամ<sup>7</sup> բեր-  
նէն խան, ձէն էլ թուղ ուր խամա թը էրէժի. վուր խաց կե-  
րար, պրճար, ընկի, էն տե քընի, վուր կը քընիս, կըլնըս վի,  
նուր քիւ ձըն խէժի, գնա:

176. Զիուէն բռնից. — Խրեօխպէր, մնացի բարեռով, էսաց:

էսաց. — Դաւիթ, Ասասուած քեօ բան յաջողի.

— Դաւիթ, էսաց, վուր կերթաս, էրկըթէ սուն կայ ճամբ-  
խու մէջ. քիւ թուր էն էրկըթէ սիւն ղար, վուր էրկըթէ սուն  
կառւեց, մ երթար, քիւ բան յաջուղ չի: Կերթաս կուու մէջ,  
յըմեն գեախ, գեօլաս. «Խաչ պատարաստի վար իմ աջ թիւին».  
վուր չը գեօլաս, քիւ ձին էլ քիզնէ կըռըկի: Գիւ ոգորմած

1 Արմի=Ներ:      2 Փորքաշ, փորկապ:      3 Քաշիկ, պնդացնել:  
4 Ասպանդակ:      5 Թրք = Դաւակ:      6 Մատաղ:      7 Թրք=Սանձ: